

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/7**

**19 ապրիլի 2016 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Գրիգոր Այվազյանի 21.03.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.12.2015թ-ի թիվ 2307/02 որոշման դեմ:

**Ա/Ձ Գրիգոր Այվազյանի գանգատում բերված փաստարկները.**

2016թ-ի մարտի 10-ին ՀՀ Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության կողմից Գրիգոր Այվազյանը տեղեկացվել է, որ որպես անհատ ձեռներեց ունի չվճարված հարկային պարտավորություն 2010-2012թ.թ. համար, որի ընդհանուր գումարը կազմում է 263.063 դրամ:

Ա/Ձ Գրիգոր Այվազյանը տեղեկացնում է, որ նշված հարկային պարտավորությունը նա ի վիճակի չէ կատարել, քանի որ տառապում է հոգեկան հիվանդությամբ, ունի երկրորդ կարգի հաշմանդամություն, ստանում է անաշխատունակության թոշակ:

Ա/Ձ Գրիգոր Այվազյանը հայտնում է նաև, որ չունի ինքնուրույն ընտանիք, ամուսնացած չէ և ներկայում գտնվում է թոշակառու ծնողների խնամքի տակ:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Գրիգոր Այվազյանը խնդրում է քննության առնել իր դիմումը և ազատել նշված հարկային պարտավորությունից:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Գրիգոր Այվազյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 11.12.2015թ-ի դրությամբ սոցիալական ապահովության վճարի գծով նրա չկատարված պարտավորությունները կազմում են 263.063 դրամ, որից ապառք 170.000 դրամ, տույժ 93.063 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է 2010թ-ի ապրիլից մինչև 2012թ-ի դեկտեմբեր ամիսների հաշվարկներով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 14.12.2015թ-ին ընդունվել է թիվ 2307/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Գրիգոր Այվազյանից 263.063 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Որոշումը կատարվել է ըստ օրենքի:

Ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Ինչ վերաբերվում է Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունից ազատելու վերաբերյալ գանգատում բերված միջնորդությանը, ապա հարկ է նշել, որ Հանձնաժողովը նման լիազորությամբ օժտված չէ, քանի որ պարտավորությունից ազատելը համարվում է արտոնության տեսակ, որը կարող է սահմանվել օրենքով: Մասնավորապես, վերոգրյալ պարտավորությունների առաջացման ժամանակահատվածում գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն. «Սոցիալական վճարումների կատարման և սոցիալական վճարների գծով հաշվարկված տույժերի ու տուգանքների վճարման արտոնությունները սահմանվում են օրենքով»:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.12.2015թ-ի թիվ 2307/02 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

  
 **ՄԱՍԻՆ**